

## Վ Ե Ր Զ Ա Ր Ա Ն



Այս սարսուղի ճշմարտութիւնները ճանչցնելու համար որոշուան տալէ առաջ՝ շատ տատանեցայ ու երկարօրէն մտածեցի: Քաղափարն ունեցայ նոյն իսկ զանոնք թեթեւեղնելու՝ որպէս զի չի վշտացնեմ իմ Իսլամ ընկերակիցներս:

Սակայն ազգի մը անդամներէն կամ կրօնքի մը յարողներէն միոյն կողմէ գործուած ոճիրներու պատասխանատուութիւնը՝ չի կրնար հաւաքաբար կշռել այդ ազգին կամ կրօնքին վրայ:

Իսլամական օրէնքը, հեռի՛ ընդունելէ այդ կարգի վայրագութիւններ, ամենապիտքը անարդարութիւն մը չի թողատրեր: Անիկա կը հրամայէ ամէն բանի մէջ ճշմարտութիւնը որոնել: Այս այսպէս ըլլալով, հարկ չի տեսայ ծածկելու այն իրողութիւնները՝ զորս ես հաստատած եմ և որոնց համոզումը ունիմ:

Չեմ կարծեր որ այդ ճշմարտութիւններու մերկացումը կարենայ տարրերու միջեւ անհամերաշխութիւնը աւելցնել: Վասն զի ես յոյս ունիմ որ այս վայրենի խելագարութիւնը չպիտի երկար տեւէ:

Հին վարչութեան օրով սովորութիւն էր ոճիրները պահել, ուրանալ, փաստերը խեղաթիւրել:

Այդ վնասակար դրութեան շնորհիւ, այն հիւանդութիւնը, որմէ երկիրը կը տատապէր իբր շարաւախց վէրքէ մը, հայտնութեան կողին փակչած փափստի մը ձեւն առած էր: